



Իմ կարծիքս այս է թե՛ երբ ժողովուրդին մը մէջ խնդիր մը յուզուի պէտք է անմիջապէս և լըջօրէն լուծուիլ, ներկային բաւականութեան և ապագային ապահովութեան համար. վասն զի խնդիրն յուզուած օրէն մինչև լուծումը վայրկեանը ներկան անստուգութեան մէջ կը տատանի, և անստուգութիւնը միջին կէտ չունենալով՝ բոստ ճակատագրի կիստ կամ կորուստ կը տրամադրէ:

Որ և է խնդիր մը, ընդհանուր ըլլայ կամ մասնաւոր՝ երկու կուսակցութեանց մէջ բացուած դատի կը նմանի, որ դատաւորին վճռովը միայն կը դոյրուի, վէճքի մը, որ սպեղանի կ'ուզէ, հիւանդի մը որ բժիշկի պէտք ունի:

Կան վէճքեր, որ երբեմն ինքնին կը դոյրուին, կան նաև վէճքեր որ՝ ընդհանրապէս դեղով կ'անհետին, այսինքն օտար դարմանով մը. բայց ընդհանրական խնդիրը ինքնին չ'լուծուիր, և ասոր համար որքան աշխատուի այնքան կը շփոթի, և յետոյ լուծումը կամ դժուարին և կամ անկարելի կ'ըլլայ:

Իսպառ Իզմիրի աղգային քուէարկութեան խնդիրն նկատմամբ է, այս խնդիրը բաւական ժամանակէ՛ ի վեր շարունակուելով շփոթեցաւ, բնականեցաւ, և այնքան մեծցաւ որ՝ ինքնին լուծում գտնելը անկարելի ըլլալով վերջապէս երրորդական անձի մը՝ այսինքն դատաւորի մը պէտքը զգալի եղաւ:

Ընդհանուր քուէարկութիւնը անհրաժեշտ է. լաւ, որ օրէնքի համեմատ պիտի դորձադուրի այն, բնականաբար Սահմանադրութեան համեմատ. լաւ, շատ լաւ. բայց ո՞վ պիտի ըլլայ այդ օրէնքի դորձադուրը, ահաւասիկ բուն խնդիրը որ՝ տակաւին նկատողութեան առնուած չէ և որու լուծումէն յառաջ անկարելի է դորձ տեսնել:

Ահա ինչպէս.

Արդէն ամէն մարդ գիտէ որ գրեթէ երկու տարիէ՛ ի վեր նենգաւոր Եղեմեանի խնդիրը ծագելով, ի վաղուց անտի իբր եղբայր ապրող Իզմիրի Հայերը իրարմէ զատեց և երկու հակառակ կողմէն բաժնելով զանոնք անարժան եկեղեցականը Աւետարանի սա լուսաւոր տառերը, ՍԻՐԵՑԻՔ ԶՄԻՄԵԱՆՍ, նենդելով, ԽԼԵՑԻՔ ԶՄԻՄԵԱՆՍ, քարոզեց: Մարդ Իզմիրի այդ պէզալի քարոզը մերժեց, և նենգաւորը վառելով խառն պատճեց. ապա Իզմիրի իր ծուռ հաւատքին վրայ հաստատուեցաւ և մինչև հիմա Եղեմեանը բերել տալու բացարձակ խայտառակութեան գաղափարը կը տածէ, իր տղիտութեան վրայ կը պարծի կեղծաւորներու մեծարանքին խաբուելով. . . .

Ցաւալի կայութիւն:

Ես որ՝ այդ կեղծաւոր գասին դիմալը վար առնել և աշխարհի թուրովը նշաւակել կ'ուզեմ՝ զայն խաղաղութեան և ճշմարտութեան հիմքը հաստատելու համար, կը յաւիմ սակայն որ երբեմն այս տեսակ ստահակները լուսաւորութեան անոյեաններ կը կարծուին թերևս ձայնի առաւելութիւն մը գտնելով. . . .

Արդ, քանի որ Եղեմեանի մահատու շունչը դեռ կը շարժէ նուազատ կուսակցութեան մը մարմինը, կարելի չէ ինքնին գործել օրէնքի տրամադրութեանց հաւատարմ մնալով, և հետեւաբար կը կարօտինք երրորդական դորձադուրի մը, ոչ այս ոչ այն կուսակցութեան բարեկամի մը, ասոր համար ըսի թէ օրինաց դորձադուրի խնդիրը լուծուելէ յառաջ անկարելի է դորձ տեսնել:

Բայց խնդիրն այս էական կէտը զանց առնուելով քուէարկութիւնը տեղի ունեցաւ, աւագը վրայ պալատ կանգնելու յիմար փորձը փորձելով և այն ալ ինչպէս.

Տէր Գեորգի նման անուս, հիւանդոտ, ամեն մասի տկար՝ և հետեւաբար իմացականութեան ոյժը թեթեւալով թերևս ամեն լսածին հաւատ ընծայող՝ և իր բոլորաբեր Եղեմեանի արբանակներով շրջապատուած բարի և միաբնակ անձ մը Ընտրողական ժողովը նախադա՛ կ'ըլլայ, անարժան Եղեմեանի տաղաւալի փողարը սուղով քանի մը աննշան անձերէ (փոքրիկ բացառութեամբ) բաղկացեալ Ընտրողական ժողով մը կը կազմուի որ՝ այսքան խայտառակութեանց գլխաւոր պատճառ լինող հին Գաղաքական ժողովին հետ միանալով վերջապէս ընդհանրացած մը կը հրատարակէ որ տեսնողին պէզալի զգուսնիք կը զրգուէ:

Այս մեքենայէն քսան անձերու անունը պարունակող մասնաւոր քուէթուղթ մը դուրս կ'ելլէ և գաղանապէս շուկաներու մէջ կը շրջի նենգութեան վիժած դաւակնելու ձեռք, անհատին ձայնը և աղատ կամը կը բռնաբարուի, աղքատին ընտրութիւնը կը դնուի, և այսքան խայտառակութեանց դէմ բողոքներ կը գրուին, արդար տրտունջներ կը լսուին, ժողովուրդը յուզուած է, բայց որո՞հ հոգ, նենգութիւնը կը գործէ, ժողովը Հայաստաններ, այո՛, Հայաստաններ նաև հետեւեալ գրին.

«Արժանապատիւ, Նախագահ Ընտրողական ժողովոյ:

Պատուարժան Հայր,

Եթէ չափ հաւակնու ես եմ ի բաց առնու, ինչն զիրաւունս աշակցելոյ որոց՝ պարտ է առաջնորդել ազգին խնդիրներէն յանապատի ի պարիսպս Աւետեաց, ո՛ր այն որ իցէ ուրեմն յընտրելու անտի ձեռքով ընդ հաւան, որ կարէ գիտել ես կամ ինքն ունի անթերի գրախանձումն նշանագրելոյ յօդուածոցն Սահմանադրութեան:

Զատ ես, շատ իսկ յայնմ են որոց ոչ երբեք հպեցան ինչն գրեալ յօդուածն յաւերժական. բացում ես այլք, պատկարճեաց բողոքեալ ի հակառակ ի մուսուլման կան շքեալ:

Ընդ այս ներհակ օրինաց ոչ ես այլ ունեցով ժողով ի բողոքս շարեալ գնացն փոխի սիրտ իմ վշտաբեկ, ոչ եթէ նախաձեռն փառաց փառեալ հոգի՝ այլ գի ընդ հոս պաշտօն զանկալով զԱզն վերջնականաց առ ազգն իմ նաւարեկեալ:

Ընկալցի յակնն դիտողի այս գիր անմախաճ, ընդ որ մնամ աղօթիցդ քաղցանօք:

Եւ ստուգել ինչո՞ւ աղգայնութեան իրաւունքն զրկուած եմ ես, եթէ պատճառը տարիքս է, ինչո՞ւ արդեօք իմ հասակակիցներս այդ զրկումը չեն կրեր. եթէ Տէրութեան սուրբ չվճարել է, ո՞վ տուրք ուղեց մինչև հիմա ինձմէ, և որ Իզմիրին է այն որ այս տուրքը կը վճարէ, եթէ կը վճարէ ինչո՞ւ աղգ, ժողովը եօթ տարուան արդ պահանջումն անդորրագիրը չ'ներկայացրեր տեղական կառավարութեան, ո՞ր է եօթ տարուան հաշիւը. ո՞ր են այս ստակները. միթէ իրաւունք չունին ըսելու թէ կամ ժողովուրդը չէ վճարած և կամ աղգ. չ'գիտեմ որ ժողովը ստակները պահած ըլլալով կառավարութիւնը կը խաբէ:

Ահա տարիքի և տուրքի մասին ինչպէս կ'արդարանաւ ես, չէ թէ ես միայն այլ ինձի հետ բաղնաթիւ երիտասարդներ որոնք՝ կարողալ զրեւ գիտեն. Տէրութեան կանոնաց հմուտ են, աղգային գործերու կատարեալ տեղեկութիւն ունին, անբիծ վարքով և մարտի բարոյականով կը փայլին, քրէական յանցանքով պատժուած չեն, և Սահմանադրութեան պահանջած յատկութիւններէ աւելի արժանիք ունին: Ինչո՞ւ, վերջապէս ինչո՞ւ զրկուած ենք աղգայնութեան իրաւունքէն:

Գառնանք միւս կողմը.

Բայց ի քանի մը պատուաւոր անձերէ, որոնք են այն արժանաւոր ընտրելի և ընտրողք հինգ հարիւր եօթանասունը հինգ անձերու մէջ, արդարեւ ընտրողական ժողովը իր սեռ ու անպատիւ գաղափարը յառաջ տանելու համար այդ անձերը արժանաւոր դաւանած է, բայց սխալ է այս, վասն զի անոնց մէջ գեռ. երեսուն տարին չ'ընթացողներ կան, վասն զի ծնած օրէն մինչև այսօր տուրք չ'վճարողներ կան, վասն զի անբարոյականներ, յանցաւորներ, տղէտներ, կրօնափոխներ կան. . . .

Մինչև հոս զրաւներուս անուրանալի ճշմարտութիւնը աղայացողանելու համար անհրաժեշտ փաստեր չեն պակսիր, և քանի որ գիտող աչքի մը առաջին պարտաւորութիւնն է խնդիրն խորը մինչև յատակը նկատել, թափանցեցնել ուրեմն հոս:

Յուլիս 20 կիրակի օրն հասաւ, կէսօրէն ետեւ ժամը ճիշդ և քերթի քուէհամարը պիտի սխտր ըստ հրահանգի, առաջնորդարանին մէջ ժողովուրդը խոնած էր և ժամը երեքը կ'սպասէր, մինչև այն ատեն եկած քուէթուղթերը ընդունուեցան, վերջապէս ժամը երեք հնչեց, ամեն մարդ անձկանօք կ'ըսպասէր որ ընտրող և Գաղաքական ժողովը առանձին պահուած սենեակէն դուրս ելլէ, բայց ընդհակառակն այն մասնաւոր սենեակին դուռը գոյցուեցաւ, ժամը երեք ու կէս հնչեց և տակաւին Գեորգի-Սիրեան ըմբոսնեցաւ. . . . Ո՛հ, որո՞ւ մարէն կ'անցնէր արդեօք, նենգութեան և խաղախութեան սոսկալի գործողութիւն մը տեղի կ'ունենար հոս. . . .

Սրահը խոնած ժողովուրդին մէջ վեր ի վայր կը շրջէի, և Գեորգի-Սիրեանը բացուեցաւ կիսով չափ, մօտ գայի, ինչպէս ուրիշ շատեր, և տեսայ որ քուէթուղթի սնտուկը բացուած և վրան քանի մը հոգի ընկած էր. . . . Ներս մանեւ ուղեցի, բայց դուռը նորէն գոյցուեցաւ. . . .

Ինչ կ'ընէին հոս, ինչո՞ւ սնտուկը բաց էր, չէ որ քուէհամարը ժողովուրդին առաջը պիտի բացուէր ըստ կանոնի, ուրեմն ինչո՞ւ գաղանի կը բանան, ինչ կը փնտռեն անոր մէջ: Այսպէս ահա նենգութիւնը պէզալի յաղթանակ մը տարաւ որ շատ չտեսեր, այսպէս ահա քուէթուղթերը փոխուեցան. . . .

Ուրեմն Ընտրող և Գաղաքական ժողովը խիղճ չունի. ուրեմն ընդհանուր ձայնը կը խեղդէ նա, ուրեմն աղատութիւնը կը բռնաբարէ, ուրեմն կը խաբէ զմեզ. . . և յետոյ ճիշդ ժամը չորսին անկէ դուրս ելլելով սնտուկը ժողովուրդին առջև կը դուրս եւ Տ. Գեորգի հայրը իբր թէ առաջին անգամ բանալու պէս կը խաչակնէ և կը բանայ զայն, ամօթ և նախադիմք ցած անօրէնութեան:

Հապա որքան ծիծաղելի բան էր երեք հարիւրէն աւելի քուէթուղթոյ միօրինակ, մի շարքով, մի դրով և մի և նոյն անուններով ներկայիլ:

Ուրեմն.

Իզմիրիք, պիտի թողնէք որ ձեր աղատ ձայնը մասնաւոր և նենգաւոր ձեռքերու տակ խեղդուի. պիտի թողնէք որ աղգ, գործերը, կրթութեան այսինքն մահու և կենաց խնդիրը խեղ մը սխալեցողներու ձեռք խաղալի լինի:

Իզմիրիք, փառասիրտութեան և ռիսկալութեան ժամանակը չէ, խնդիրը աղգային պատուը և հոգւոյն խնդիրն է, մանկաւոյն կրթութեան խնդիրն է, որ ուսնակուի կը լինի:

Իզմիրիք, աղգին պատիւը ձերն է, անոր հոգին դուք էք. մի կամիք որ ձեր պատիւը արատաւորի, մի կամիք որ ձեր հոգին փշուի. . . .

Իզմիրիք աղգին մանկտին ձեզ կը վերաբերի. դուք ունեցիք ձեր զաւակներու, ձեր փոքր եղբայրներու վրայ, անոնց ապագան չմտածելով Աստուծոյ և մարդկութեան առջև պատասխանատու լինելէ վախճիք, մի թողուք զանոնք որ դեռ աղքատ չ'անցնեցող և կրթութենէ զլսովին զրկուած կոշտերու կառավարութեան և սնտուկութեան յանձնուին:

Իզմիրիք, մի թողնէք որ ձեր երկար տարիներէ ի վեր Հայ աշխարհի առջև ունեցած անարատ համբաւը «սուտ և չինծու» ըսուելով պախարակուի, դուք իրաւամբ արժանի էք այս համբաւին, ինչո՞ւ ուրեմն ստախոս բերաններու կը յանձնեք զայն:

Իզմիրիք, շարժեցէք, մարդ ընտրեցէք և լոյսը սիրեցէք, ձեռուններ և հայրեր լոյս խնդրեցէք, աղիւ մայրեր աղաչեցէք ձեր ամուսիններն ու զաւակները որ անաշու լինին, դուք ալ կրթութեան բայց ճշմարիտ կրթութեան հոգ տարէք, երիտասարդներ, ձեր երակներուն մէջ բոցախառն արեան հետ աղգասիրութեան եռանդն ալ շրջեցուցէք, ատեցէք կեղծիքը, ինչպէս կ'ատեք անառակութիւնը. համեստափայլ կոյսեր, լացէք և աղաչեցէք ձեր ծնողքն ու եղբայրները որ ձեզ մայր ընելու համար լուսաւոր միջոցներէ չ'չեղին, և ձեզ գէպ ի բարին ու ճշմարիտը առաջնորդելու համար ձեր գաղափարաւորութեան խնդիրը ամեն բանէ աւելի սրբազան համարին. սիրեցէք ապագայ սերունդը, ինչպէս կը սիրէք ներկային մէջ սրբութիւնն ու անբծութիւնը: Քահանաներ, դուք ալ պահ մը դարձեցէք զանձանակ շրջեցունէք, և ՍԻՐԵՑԻՔ ԶՄԻՄԵԱՆՍ քարոզեցէք:

Իզմիրիք, բայց աղիւ և վեհանաճ Իզմիրիք, մեր հաւատքին վրայ աննկուն մնանք, քանի որ կը հաւատանք թէ պարտաւորութիւնը առաքնութեանէ աւելի սրբազան է, և թէ պարտաւորութեան ամբողջութիւնը Հայրենիքի և մարդկութեան ծառայելն է, մեր հայրենիքը մեր աղբն է. աղգին ծառայելով մարդկութեան ալ ծառայած կ'ըլլանք, և այս ծառայութիւնը այն ատեն ճշմարիտ և օգտակար կ'ըլլայ երբ լոյսի մէջ կը կատարուի, այո, խաւարը մերժենք, լոյսը փնտռենք, լոյսը պաշտենք, լոյս, լոյս, միշտ լոյս:

Իզմիր, 1875 յուլիս 26:

ԿԱՐԱՊԵՏ Ս. ՊԵՂԱՍԵԱՆՆԵԱՆ